

# ՃԱՇԵՐ ԵՒ ԽՆՃՈՅՔ

## Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ջ



**Մ**արդուն անհատական եւ ընկերային կենաց մէջ՝ ամենէն անհրաժեշտ, զուարթ ու հաճելի վայրկեանը եղած է միշտ ճաշի ժամանակը, լինի այդ թագաւորին պալատան, շինականի խրճիթին կամ ճգնաւորի խցկան մէջ:

Այդ վայրկեանը միանգամայն հայելին է անհատին կամ ընկերութեան մէջ տիրող ընդհանուր բարոյականութեան աստիճանին եւ կենցաղավարութեան եղանակին, ունենալով ստուար բաժին մը սովորութեանց՝ որոց մէջ կը ցոլանայ ազգի մը նկարագիրը: Այս կողմանէ ուրեմն շատ մեծ է մեր նախնեաց ճաշին ուսումնասիրութեան օգտակարութիւնը, որ պիտի նպաստէ մեր անցելոյն պատմական եւ նոյն իսկ լեզուաբանական շահաւէտ լուսաբանութեանց: